ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 426

09 ապրիլ 2024թ.

«Ի ՋԻ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար 2024թվականի մարտի 14-ին հայտարարված «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/7» ծածկագրով ընթացակարգի 1 և 2 չափաբաժիններին «Ի Ջի Էլեկտրոնիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ներկայացրել է մասնակցության հայտ: Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով գնահատման ենթակա հայտերիմեջ ներառված առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ի Ջի Էլեկտրոնիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ,մասնավորապես՝ մասնակցի կողմից չի լրացվել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ ֆիրմային անվանումը,մակնիշը,արտադրողի անվանումը,տեխնիկական բնութագիրը: Գնահատող հանձնաժողովը,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 41-րդ կետի պահանջները, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, էլեկտրոնային աճուրդի համակարգով ծանուցում է ուղարկել և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Այնուհետև, գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Ի Ջի Էլեկտրոնիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից որպես շտկում ներկայացված ապրանքի ամբողջական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին,մասնավորապես՝ «Ի Ջի Էլեկտրոնիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է՝ «տպման տեխնոլոգիան- թանաքային»,սակայն ընկերության կողմից առաջարկվող ապրանքի մոդելի տպման տեխնոլոգիան լազերային է,ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ «Ի Ջի Էլեկտրոնիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը էլեկտրոնային աճուրդի համակարգում գնահատվել է՝ անբավարար և մերժվել է, որից հետո «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/7» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարվել է չկայացած՝ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերությամբ և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Ի Ջի Էլեկտրոնիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ՝ **02315393**) երկու տարի ժամկետով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման օրինակը ուղարկել «Ի Ջի Էլեկտրոնիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Ծաղկաձոր համայնքի ղեկավար Նարեկ Հարությունյանը:

4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել՝ այն ստանալու պահից հաշված երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**